

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/8

28 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արտակ Անանյանի ներկայացուցչի 27.09.2014 թ-ի գանգատը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դեմ:

Ա/Ձ Արտակ Անանյանի ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.

1. Որոշումը կայացնելիս հարկային մարմինը ղեկավարվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածն ընդունվել է ««Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-140-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 2014 թ-ի հունվարի 7-ին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածը նույնպես ուժի մեջ է մտել 2014 թ-ի հունվարի 7-ին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող, կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող, կամ պարտականությունների կատարման կատարման կարգ սահմանող կամ խստացնող իրավական ակտերին հետադարձ ուժ չի կարող տրվել:

Նույն օրենքի 78 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե սույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Փոփոխություններ և լրացումներ պարունակող վերոհիշյալ օրենքներն «այլ բան չեն նախատեսել» և չէին կարող նախատեսել, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը:

Ա/Ձ Արտակ Անանյանի և հարկային մարմնի հարաբերությունները ծագել են 2014 թ-ի հունվարի 7-ից առաջ, այսինքն՝ նշված իրավահարաբերություններն առաջացել են վերոհիշյալ օրենքների ուժի մեջ մտնելուց տարիներ առաջ, ուստի այդ օրենքները չեն կարող կիրառվել, և դրանց հիման վրա չի կարելի կայացնել վարչական ակտ:

Վերոգրյալ հարցին անդրադարձել է նաև ՀՀ վարչական դատարանն իր ՎԴ/1639/05/13 որոշմամբ:

2. ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով օրենքով նախատեսված դեպքերի: Նշված իրավանորմից հետևում է, որ սեփականությունից զրկել հնարավոր է միայն

դատական կարգով, այսինքն՝ պետք է առկա լինի համապատասխան դատական ակտ: Մինչդեռ հարկային մարմինը դա իրականացրել է իր թիվ 318 որոշմամբ:

3. Թիվ 422 որոշման մեջ սահմանված չէ պարտավորությունների առաջացման ժամանակաշրջանը, ինչը վարչական ակտը դարձնում է ոչ իրավաչափ, հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածի 1-ին մասի ա) ենթակետը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 31.03.2014 թ-ի թիվ 422 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Արտակ Անանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 31.03.2014 թ-ին ընդունել է թիվ 422 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որի համաձայն 28.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Արտակ Անանյանի չկատված հարկային պարտավորությունը կազմում է 383.705 դրամ, այդ թվում՝ հաստատագրված վճարի գծով 12.290 դրամ, պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով 371.415 դրամ:

Հաստատագրված վճարի գծով պարտավորությունը առաջացել է 1999 թ-ի դեկտեմբեր ամսվա համար ներկայացված հաստատագրված վճարի հաշվարկով: Ընդ որում, Որոշումն ընդունվելուց հետո Ա/Ձ Արտակ Անանյանի կողմից հաստատագրված վճարի գծով պարտավորությունը՝ գումարով 12.290 դրամ, վճարվել է:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը հաշվարկվել է հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները՝ 2009 թ-ի հունվարի 1-ից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արտակ Անանյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ իրավահարաբերություններն առաջացել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88 հոդված ուժի մեջ մտնելուց առաջ, ուստի այդ օրենքները չեն կարող կիրառվել, և դրանց հիման վրա չի կարելի կայացնել վարչական ակտ, նշվեց հետևյալը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ հարկ վճարողը պարտավոր է ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությանը նախատեսված դեպքերում սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումները:

Մինչև 07.01.2014 թ-ը գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ Հարկային պարտավորությունների գծով գումարների մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի վերոգրյալ դրույթը ուժը կորցրած է ճանաչվել: Դրա փոխարեն «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսվել է այլ դրույթ, որով հարկային մարմինն իրավունք է վերապահվել հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում այդ գումարը գանձելու վերաբերյալ կայացնել որոշում: Մասնավորապես, 07.01.2014 թ-ից հետո գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Քննարկվող դեպքում 28.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Արտակ Անանյանի չկատված հարկային պարտավորությունը կազմել է 383.705 դրամ, որը Ա/Ձ Արտակ Անանյանի անձնական հաշվի քարտերում հաշվարկվել է դրանք առաջանալու իսկ օրվանից: Այսինքն, քննարկվող դեպքում առկա են եղել բավարար հիմքեր ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի կողմից 31.03.2014 թ-ի թիվ 422 որոշումն ընդունելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ գանգատում բերված պնդումները Որոշումը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78 հոդվածի 1-3-րդ մասերի դրույթների խախտմամբ ընդունված լինելու վերաբերյալ, ըստ էության, հիմնավոր չեն:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ Որոշմամբ Ա/Ձ Արտակ Անանյանին զրկել սեփականությունից՝ խախտելով ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ պարբերության դրույթները, ապա նշվեց, որ դրանք հիմնավոր չեն, քանի որ որոշմամբ ըստ էության արձանագրվել է Ա/Ձ Արտակ Անանյանի չկատված հարկային պարտավորության չափը: Իսկ Որոշումն անբողքարկելի դառնալուց հետո դրա կատարմանն ուղղված գործողություններն կիրականացվեն են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 31.03.2014 թ-ի թիվ 422 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ. Մ. ԻՐՈՒՄՅԱՆ

